

հետեւեալ օրինակներէց է երևում: Կ. Պօլիս մանելուց յետոյ, նա հրամայեց արիոսական Դիմոփիլոս եպիսկոպոսին կամ ընդունել համագոյութեան դաւանութիւնը և կամ թողնել Կ. Պօլսի եկեղեցիները և հեռանալ: Դիմոփիլոսը գերազասեց վերջինը, և արիոսականները սկսեցին ժողովներ կազմել քաղաքից դուրս: Ինքն կայսրը տարաւ Գրիգոր Ստոււածարանին ս. Առաքելոց մայր եկեղեցին: Զանազան կուսակցութիւնների եպիսկոպոսներից պահանջելով հաւատի դաւանանքը, նա օրէնսդրական իշխանութեամբ հաստատեց ուղղափառ դաւանութիւնը (հաւատի հանգանակը), իսկ միւսները պատառոտեց: Սակայն, Սոզոմենոս պատմագրի նկատողութեան համեմատ, կայսրը կամենում էր խիստ օրէնքներով հերետիկոսների վերայ միայն երկիւղ ազդել, բայց այդ օրէնքները ի կատար չէր ածում, և Եւնոմիոսին աքսորելը այն պատճառով, որ նա Կ. Պօլսում շարունակում էր ուղղափառների մէջ տարածել իւր վարդապետութիւնը—կայսեր կողմից հերետիկոսների դէմ ձեռք առած միակ բռնի միջոցն էր:

Այս ձեռնարկութիւնների մէջ, ի հարկէ, կայսրը առանց եպիսկոպոսների ազդեցութեան չէր գործում: Ի՞նչպէս էին նայում կայսեր այս գործողութիւնների վերայ քրիստոնեայ եպիսկոպոսարանների ներկայացուցիչները: Ի՞նչպիսի հայեացք ունէին նրանք եկեղեցու և պետութեան յարաբերութիւնների վերայ:—Նրանց խօսքի ու գործի մէջ կարելի է մի քիչ հակասութիւն նկատել:

385 թուին Ամբրոսիոս Մեգիտլանացին հրաւէր ստացաւ կայսերական կոնսիստորիա գալ արիոսական Օգոսինատիոս եպիսկոպոսի հետ ունեցած վէճի պատճառով: Նրանց մէջ միջնորդ դատաւոր (arbiter) կամենում էր ինքը Վաղենտինոս Բ. կայսրը լինել (Ծն. 370—371), որ գտնուում էր իւր մայր Յուստիանէի զօրեղ ազդեցութեան տակ, որը արիոսականութեան խիստ հետևող էր: Ահա թէ Ամբրոսիոսը իւր նամակում կայսեր ինչ է գրում. «Ե՞րբ ես լսել, ո՞վ ողորմած կայսր, որ հաւատի գործերի մէջ աշխարհականները եպիսկոպոսների դատաւոր լինեն: Եւ մի

քանի շողոքորդներ համոզում են մեզ—մոռանալ մեր քահանայական իրաւունքները և ազատակամ տալ ուրիշներին այն, ինչ որ Աստուած շնորհել է ինձ: Եւ եթէ եպիսկոպոսը պէտք է աշխարհականից ուսանի, այն ժամանակ ի՞նչ դուրս կգայ: Հետեապէս, պէտք է աշխարհականը դատի, իսկ եպիսկոպոսը լսի: Բայց ո՞վ կարող է մերժել, որ հաւատի հարցերի մէջ,—հաւատի հարցերի եմ ասում ես,—ոչ թէ կայսրներն են եպիսկոպոսների վերայ դատաւոր, այլ եպիսկոպոսները քրիստոնեայ կայսրների վերայ»: «Աստուած կտայ, հասակդ կառնես, այն ժամանակ կհասկանաս, ի՞նչ արժէք ունի այն եպիսկոպոսը, որ քահանայական իրաւունքը, jus sacerdotale, աշխարհականի ռաքերի տակ է ձգում: Քո հայրդ, Աստուծոյ ողորմութեամբ, հասակն առած մարդ, ասում էր. «Ես չեմ կարող եպիսկոպոսների վերայ դատաւոր լինել», իսկ քո սղորմածութիւնն ասում է. «Ես պէտք է դատեմ»: Նա, որ մկրտուած էր յանուն Քրիստոսի, իրեն անընդունակ էր համարում այդպիսի ծանրութիւն վերցնելը, ինչպէս եպիսկոպոսների վերայ դատաստան անելը: Իսկ դու, ողորմած կայսր, դեռ պէտք է պատրաստուես մկրտութիւն ընդունելու, սակայն դու ձգտում ես դատ անել հաւատի մասին, երբ ինքդ այդ հաւատի խորհուրդները չզիտես»: (Ոչ, կոնսիստորիա գալ չեմ կարող, իմ ժողովուրդս էլ չի թողնիլ ինձ գալ այդ դատաստանին. մաշաւանդ որ, յայտնի էլ չէ թէ ի՞նչ աշխարհականներ պէտք է դատաւոր լինեն. հապա՞ եթէ Օգսենտիոսը հրէա դատաւորներ ընտրէ: Ոչ,) եթէ պէտք է քննել, այն ժամանակ եկեղեցու մէջ քննենք. այդպէս էին անում և ինձ էլ այդպէս են սովորեցրել իմ նախորդներս: Եթէ հաւատի մասին պէտք է խորհրդակցել (conferendum), այդ միայն քահանաների խորհրդակցութիւն պէտք է լինի, ինչպէս այդ կոստանդնի ժամանակ էր: Յաւերժայիշատակ այս կայսրը նախապատրաստական ոչ մի օրէնք չհրատարակեց, այլ քահանաներին թողեց ազատ դատաստան անել...» «Եթէ Օգսենտիոսը բողոքում է ժողովին, որպէսզի հաւատի մասին դատողութիւններ տրուին, [թէ և կարիք

չկար մէկի պատճառով անհանգստացնել բոլոր եպիսկոպոսներին, մինչև իսկ թէ նա երկնքից իջած հրեշտակ լինէր, (Գաղ. Ա.—Ց.), նրան չպէտք է առաւելութիւն տրուի քան եկեղեցիների խաղաղութեանը], երբ լսեմ, թէ ժողովը գումարուում է, ինքս էլ կգամ»:

Նոյն տարին կայսրը պահանջեց Ամբրոսիոսից, որ մայր եկեղեցին Օգոստինոսին յանձնի: Ամբրոսիոսը հրաժարուեց: Ահա թէ այդ առթիւ նա ինչ է ասում. «Ինձ յայտնում են քո հրամանը. «յանձնիր մայր տաճարը»: Պատասխանում եմ. «Ես էլ իրաւունք չունեմ յանձնելու, (այն, ինչ որ ստացել եմ պահպանելու և ոչ յանձնելու համար»), և քեզ համար էլ, ս՛վ կայսր, օգուտ չէ վերցնելը»... Մասնանշում են, թէ կայսրին ամէն բան թոյլատրելի է, որ ամէն բան—նրանն է: Պատասխանում եմ. «Մնդրում եմ, ս՛վ կայսր, մի երեւակայիր, որ դու որ և է կայսերական իրաւունք ունիս Աստուածային առարկաների վերայ»: «Մենք տալիս ենք «գկայսերն կայսեր, և գԱստծոյն Աստուծոյ» (Մատթ. ԻԲ. 21): Հարկը կայսրինն է. այդ բանը նրան չեն մերժում: Եկեղեցին—Աստուծոնն է. հետևապէս այդ չի կարելի յանձնել կայսրին, որովհետև կայսեր իրաւունքը չի կարող Աստուծոյ տաճարի վերայ տարածուել»: «Պալատները պատկանում են կայսրին, իսկ եկեղեցիները պատկանում են քահանաներին: Քեզ հաւատացած է իրաւունք ունենալ հասարակական բայց ոչ թ՛ սուրբ հաստատութիւնների վերայ»: «Կայսեր համար ի՞նչ կարող է աւելի պատուաւոր լինել, եթէ ոչ այն, որ նրան եկեղեցու որդի են անուանում: Բայց կայսրը եկեղեցու մէջ է, և ոչ եկեղեցուց բարձր»: «Վերջապէս ասում են թէ կայսրն ասաց. «Պէտք է որ ես էլ գոնեա մայր տաճար ունենամ»: Ես պատասխանեցի. «Քեզ թոյլադրելի չէ տաճար ունենալը. ինչո՞ւ համար է հարկաւոր քեզ շնացող կին ունենալ: Իսկ այն եկեղեցին, որ օրինական պահով Քրիստոսի հետ չի միացած, շնացող է»:

Այդպիսով մենք տեսնում ենք, որ մի կողմից պետական իշխանութեան դատ անելու իրաւասութիւնը

Եպիսկոպոսների կամ ընդհանրապէս հաւատի գործերէ վերաբերութեամբ չեն ճանաչուում, միւս կողմից ուղղափառութեան հարցը կայսեր բարեհայեցողութեանն են թողնում, նրան են վերապահում ցոյց տալ զանազան տեսակ դաւանանքների մէջ ուղղափառը: Դիմոփիլոսից պահանջում էին, որ նա իւր տաճարները կայսեր համախոնհներին յանձնի, արիտասական եպիսկոպոսը հնազանդուում է, և եկեղեցական գրողները չեն համարում, որ կայսրը այդպէս վարուելու իրաւունք չունէր: Երբ կայսերական իշխանութիւնը այդ տեսակ պահանջներով դառնում է ուղղափառներին և Ամբրոսիոսից պահանջում է ոչ աւելի քան նոյնը, ինչ որ նա պահանջում էր Դիմոփիլոսից,—մեծ եպիսկոպոսը հաստատապէս ցոյց է տալիս նրան այն սահմանը, որ պէտք է բաժանէ եկեղեցին պետութիւնից:

Սակայն Ամբրոսիոսը ի՞նչ աստիճանի էր հասցնում եկեղեցու բաժանումը պետութիւնից: Արդեօք այդ բաժանումը հասնում էր մինչև այն պահանջման, որ կայսրը միշտ և ամէն բանի մէջ միայն իրաւական սկզբունքներով վարուէր, որոնք պետութեան հիմքերից մէկն են: Ոչ, երբ 384 թուին ծերակոյտի անդամները խնդիր տուին Վաղենտինիոս Բ-ին հեթանոսական Victoriae զոհարանը վերականգնելու և քրմերին պետական հասոյթ ապու համար, և կայսրը, ըստ երևոյթին, գտնում էր, որ պէտք է այդ խնդրին բաւականութիւն տալ, այն ժամանակ Ամբրոսիոսը խստիւ յիշեցրեց նրան, որ նա իբրև քրիստոնեայ իրաւունք չունի նոյն իսկ կողմնակի կերպով հեթանոսական աստուածապաշտութեանը նպաստելու, որ եթէ նա ծերակոյտի անդամների խնդրին ընդունի, նա կարող է եկեղեցուց բանադրուելու վտանգին ենթարկուել: Երբ 388 թուին ամբոսը եպիսկոպոսի զրգմամբ հրէից սինագոգան քանդեց, իսկ կրօնաւորները—վաղէնտինիոսեանների ազօթատունը, և Թէոդոսը հրամայեց, որ եպիսկոպոսը, եթէ զրգման մէջ մեղաւոր հանդիսանայ, իւր հաշուով շինի սինագոգան, այն ժամանակ Ամբրոսիոսը դիմեց կայսեր խիստ գրութիւններով և համոզեց նրան,

որ նա, իբրև քրիստոնեայ, թոյլ չտայ հրէաների այդպիսի յաղթանակը քրիստոնեաների վերայ, թոյլ չտայ, որ քրիստոնեաների հաշուով Քրիստոսի թշնամիները ազօթասաները շինուին: Ամբրոսիոսը կայսեր ուղղակի պարտականութիւնն էր համարում ճշմարիտ հաւատին աջակցելը և պաշտպանելը: Այժմ Ամբրոսիոսը պէտք է գրազրութեան մէջ մտնէր ոչ թէ մի երեխայի, այլ հէնց իրեն Ռէոդոս կայսեր հետ:

Ամբրոսիոսը գրում էր նրան. «Խնդրում եմ նորին կայսերական մեծութեանը համբերութեամբ լսելու իմ խօսքս, որովհետև, թէև անարժան եմ, որ դու իմ խօսքս լսես, բայց միևնոյն ժամանակ երկիւղ եմ կրում, մի գուցէ անարժան զանուեմ քեզ համար պատարագ և ազօթքներ մատուցանելու: Երբ քեզ հաղորդեցին թէ եպիսկոպոսի պատճառով սինագոգան այրեցին, այն ժամանակ դու հրամայեցիր պատժել բոլոր մեղաւորներին, իսկ եպիսկոպոսին պատուիրեցիր իւր հաշուով նոր սինագոգա շինելու: Բայց քեզ վայել էր սպասել եպիսկոպոսի պատասխանին, որովհետև եպիսկոպոսները խաղաղութեան կողմնակից և խռովութեան զապող են: Ենթադրենք թէ սինագոգան այրել է եպիսկոպոսը: Բայց ի՞նչ կլինի, եթէ նա վախից կհամաձայնուի քո որոշմանը և ամենևին չհակաձառի: Նա, հաւանականօրէն, կամ պէտք է իւր արարմունքը յետ վերցնի և կամ նահատակ դառնայ: Բայց թէ մէկը և թէ միւսը չպէտք է քո թագաւորութեանդ մէջ տեղի ունենան: Եթէ նա հերոս լինի, վախեցիր, որովհետև նա նահատակ կհանդիսանայ. իսկ եթէ նա անարժան լինի, այն ժամանակ երկիւղ ունեցիր նրա անկման պատճառ լինելուց, որովհետև գայթակղեցուցիչը առաւել յանցաւոր է: Հասցաւ եթէ ուրիշները երկիւղ կրեն և համաձայնեն սինագոգան շինելու: Այն ժամանակ քո դրօշակը այն ժողովրդի առջևից կտարուի, որը նպատակ ունի կանգնել մի շինութիւն, որ չէ ճանաչելու Քրիստոսին և կարելի է այդ շինութեան ճակատին գրել. «Պղծութեան այս տաճարը շինուած է քրիստոնեաներից վերջրած առեգանքով»: Հասարակական կարգերի

շահերը քեզ ստիպում են այդ բանն անել: Բայց որ կարգը բարձր է: Գլխաւոր նշանակութիւնը պետութեան մէջ միշտ կրօնը պէտք է ունենայ, ամէն բանի համար այստեղ պէտք է օրէնքների չափաւոր խստութիւնը լինի: Յիշիր Յուլիանոսին, որ կամենում էր Երուսաղէմի տաճարը վերականգնել, շինողներն այդ ժամանակ այրուեցին Աստուծոյ կրակով: Միթէ չես վախենում այն բանից, ինչ որ այն ժամանակ կատարուեց: Եւ խկապէս, այս ինչ խստութիւն է: Միթէ դա պէտք է թափուի ժողովրդի գլխին միայն նրա համար, որ մի հասարակական շինութիւն են այրել: Հոռովմէական պրեֆեկտների սրբան տներ այրուեցին, և սակայն ոչ ոք չպատժուեց: Եւ ուրեմն, կարգադրիր որպէսզի հրամանդ անգործադիր մնայ, եթէ չես կամենում, որ պատուհասի զանք: Եւ այրուածը սինագոգա է, անհաւատի, պղծութեան և յիմարութեան տուն: Իսկ հրէաները սրբան տաճարներ այրեցին Յուլիանոսի ժամանակ Գազայում, Ասկազոնում, Բէրիթոսում և ուրիշ տեղեր: Եկեղեցիները համար վրէժ չառար, իսկ այժմ սինագոգայի համար վրէժ պէտք է առնես: Իրանից յետոյ Քրիստոս էլ ինչպէս կարող է քեզ օգնել: Արդեօք նա քեզ չի կշտամբիլ Նաթանի խօսքերով, որ ուղղուած էր Դաւթին. (Բ. թագ. է. 8). «Առի ես զքեզ ի վանաց հօտից լինել քեզ յառաջնորդ ի վերայ ժողովրդեան իմոյ, իսկ դու թշնամեաց յաղթութիւն պարգևեցեր ընդ շահու ծառայից իմոց»: Հասկացիր, սով կայսր, որ ինձ միայն դէպի քեզ ունեցած սէրն է ստիպում այսպէս խօսել: Ես քո պարտապանն եմ, որովհետեւ դու իմ խնդրով շատերին ես ողորմացել: Դու ողորմեցիր կարճ ժամանակ առաջ ապատամբ անտիրօքացիներին, ազատեցիր թշնամուն, վերադարձրիր նրա դուստրներին և նրանց հնարաւորութիւն տուիր իրենց ազգականների մօտ կրթուելու, քո մօր թշնամուն գանձարանից ապրելու նպաստ ուղարկեցիր: Բայց քո այս վերջին արարքը նսեմացնում է քո փառքը: Ես արել եմ, ինչ որ եկեղեցու շահը պահանջում էր: Եւ լաւ է, որ դու ինձ լսեցիր պալատում, հակառակ

դէպքում միևնոյնը կասէի ես քեզ եկեղեցում»:

Նոյն բանն էր ասում նա իւր քրոջը գրած նամակում. «Երբ սինագոգայի և վաղէնախիանոսեանների աղօթատան գեկուցումն ստացայ, ես Ակվիլէյոսն էի: Լսելով, որ կայսրը հրամայել է շինել նոր սինագոգա—և պատժել կրօնաւորներին, ես նրան նամակ գրեցի, որի պատճէնը կցում եմ սրան: Իսկ եկեղեցում՝ «ընկալ քեզ զաւագան ընկուզեսայ» (Երեմ. 2, 11) բնաբանով կայսեր մի ճառ ասեցի և այդ խօսքերը յարմարեցրի այն բանին, թէ քահանան էլ, մարգարէի նման, պէտք է ասէ նաև դառն բաներ, եթէ դրանք օգտակար են: Նմանապէս առաքեալն էլ ասում է. «Արդ, որպէս կամիք, զաւագանն եկից առ ծնգ, եթէ սիրով հոգոյն հեզութեան և արդարութեան եւ խոնարհութեան». (Ս. Կորնթ. Դ. 21.): Եւ այժմ կարդացուած աւետարանի մէջ ասուած է, թէ վարիսեցին Քրիստոսին իւր տուն ընթրիքի հրաւիրեց: Քրիստոս եկաւ և բազմեց: Այն ժամանակ նրան մօտեցաւ մի մեղաւոր կին և նրա ոտներն ընկնելով, թրջում էր նրանց իւր արցունքներով, իւր մազերով սրբում և անուշահոտ իւղով օծում. (Ղուկ. է. 37, 38): Ո՞վ կայսր, վերջացրի նամակս, եղիր այդ կնոջ նման: Միրէր եկեղեցին, այդ սիրոյ համար ներիր նրանց, որոնք հրամանիդ մէջ մեղաւոր են ճանաչուած: Ի սէր եկեղեցու փոխիր հրամանդ: Թափիր իւղը, որպէսզի ամբողջ տունը, որտեղ Քրիստոս է ապրում, լցուի նրա անուշահոտութեամբ»: «Ինչո՞ւ այդ մասին սկսեցիր»: «Այն պատճառով, որովհետև այդ քեզ դէպիքս օգուտը կտանէ»: «Ի հարկէ ես խիստ վարուեցի, սակայն կրօնաւորները շատ յանցանքներ են գործում»: Կայսեր այս խօսքերից յետոյ կրօնաւորներին սկսեց նախատել զօրապետը, բայց ես ասացի նրան, «Ես այսպէս խօսում եմ կայսեր հետ, որովհետև նա Աստուծոյ երկիւղն ունի, քեզ հետ այլ կերպ կխօսէի»: Եւ ասացի կայսեր. «Թո՞յլ սուր ինձ հանդիստ հոգով սուրբ հազորութեան խորհուրդը կատարեմ, արձակիր ինձ»: Նա զլխով արաւ, սակայն ոչինչ չասեց: Ես նորից նկատեցի նրան.

«Դադարեցրու կարգադրութիւնդ»: Նա խոստացաւ: «Ես կը գործեմ, հաւատալով քո խօսքիդ», ասացի ես և կրկնեցի նորից այդ խօսքերը: «Գործիր, վստահ իմ խօսքիս»: Եւ ես սեղանին մօտեցայ և «Ճշմարտապէս» զգացի Աստուծոյ շնորհքը և անսեռանելի ներկայութիւնը: Ամէն բան կատարուեց այնպէս, ինչպէս ես էի կամենում»:

Կ. Պօլսի 381 թուի ժողովում, Անտիօքի վախճանուած Մելեաիոսի տեղ նշանակուած էր Փլաբիանոսը: Հռովմը և նրա հետ արևմտեան միւս եպիսկոպոսները Պավլինոսի կուսակցութեան հետ յարաբերութիւն էին պահպանում և Փլաբիանոսին օրինական եպիսկոպոս չճանաչելով, պահանջում էին, որպէսզի նա Հռովմ գնայ արևմտեան եպիսկոպոսներից դատուելու համար: Որովհետև Փլաբիանոսը ուշացնում էր այդ հրամանի կատարելը, ուստի Հռովմի երեք եպիսկոպոսներ՝ Դամասոսը, Սիրիկիոսը և Անաստասիոսը, յաշորգարար Թէոդոս Մեծին խնդիրներ ուղարկեցին, որպէսզի նա կարգադրէ Անտիօքի եպիսկոպոսին Հռովմ ուղարկելու համար, և նոյն իսկ յանդիմանում էին կայսեր, որ նա գահընկեց է անում, իւր սեպհական թշնամի աւագակներին, բայց անպատիժ է թողնում նրանց, որոնք բռնութեամբ Քրիստոսի օրէնքներն են ստանահարում: Եւ ինքը կայսրն արդէն արևմտեան եպիսկոպոսներին հրաւիրում էր խաղաղութեան և Փլաբիանոսի հետ հաղորդակցութիւն ունենալու: Այդպիսով իրենք եպիսկոպոսները խրախուսում էին կայսեր, որ եկեղեցական գործերին միջամտէ:

Արևելքում Արկադիոսի (395—408) և արևմուտքում Հոնորիոսի (395—423) թագաւորութեան ժամանակից կարելի է եկեղեցու և պետութեան յարաբերութեան վերաբերեալ հետևեալ փաստերն առաջ բերել:

Պելագիական վէճերի ընթացքի վերայ ոչ պակաս ազդեցութիւն ունեցան Հոնորիոսի 418 թ. հրամանները, որոնց գորութեամբ պելագիոսեանները քաղաքացիական հալածանքի էին ենթարկուած: Այս հրամանները տրուել էին

Ափրիկայի եպիսկոպոսները ցանկութեամբ, սակայն վէճի մի այնպիսի բողոքին, երբ Ջոսիմոս պապը վէճի հարցի վերաբերութեամբ վերջնական վճիռը դեռ չէր տուել և այդ մասին աւելի մանրամասն տեղեկութիւնները էր սպասում: Ոսկեբերանի գործի մէջ կայսերական իշխանութիւնը — դոնեա, ըստ ձեզի—հանդէս է գալիս նրա դէմ եկեղեցական իշխանութեան արձակած դատավճռի իբրև լսկ կատարող: Բայց երբ որ Խննդակենտրոն պապը Տիեզերական ժողովում Ոսկեբերանի գործերը վերաքննութիւնն էր պահանջում, նրա այդ պահանջն, որպէս բարձրագոյն իշխանութեան համար մի վերաւորիչ բան, Կ. Պօլսում անհետևանք թողին:

Եկեղեցու այն ժամանակուայ ներկայացուցիչները գիտակցութիւնը բնորոշելու համար հետաքրքրական են հետեւեալ տեղեկութիւնները: Ոսկեբերանն իւր շարադրութիւններից մէկում ասում է, որ քրիստոնեաներին թոյլ չի տրուում մոլորութիւնը բռնութեամբ և ստիպմամբ տապալել, այլ պէտք է մարդկային փրկութիւնը խելօք և խոնարհութեամբ համոզելու ճանապարհով կատարել. մի ուրիշ տեղ նա ասում է, առաւել լաւ է համբերել հալածանքներին, քան հալածել ուրիշներին: Երբ Արկադիոսի գորապետ գոթացի Գայնա կայսրից պահանջում էր, որ Կ. Պօլսի եկեղեցիներէից մէկը զիջուի արիոսականներին, Ոսկեբերանը, որ այդ ժամանակ արդէն Կ. Պօլսի եպիսկոպոս էր, կայսեր ներկայութեամբ յայտարարեց, որ այդ պահանջը հակառակ է Թէոդոս Մեծի օրէնքներին, որ բարեպաշտ կայսրը եկեղեցու իրաւունքները ոտքի տակ չպէտք է տայ, որ առաւել լաւ է նրա համար թագաւորութիւնից զրկուել, քան Աստուծոյ տան պիղծ մատնիչ լինել: Կ. Պօլսի եպիսկոպոս դառնալով, նա եռանդով հալածում էր եկեղեցու հետ անհամաձայններին (Նովատիաններին և Կվարտօղեցիմաններին — չորեքտասաներորդականք):

Միւս կողմից, Օգոստինոսը, որ առաջ հաւատոյ գործերի մէջ ճնշման ապօրինութեան մտքի կողմնակից էր, դոնատեանների հետ մղած կռուի փորձառութիւնից այն կարծիքն էր ձեռք բերել որ բարոյական համոզման ճա-

նապարհը, ի հարկէ, ամենագեղեցիկը և ամենալաւն է, սակայն գործնականօրէն ոչ միշտ գործադրելի, որ հէնց յօգուտ մոլորեալների պէտք է երկիւղով և բռնութեամբ գործել: Նրանց, որոնք չեն կամենում ազատ կամքով եկեղեցի մտնել, պէտք է ստիպել: 404 թուի Կարթագէնի ժողովն այս մտքով միջնորդում էր Հոնորիոս կայսրին դոնատեաններին ևս այն պատժական օրէնքներին ենթարկելու, որոնց ենթարկուում էին հերետիկոսները: Ի հարկէ, ժողովի խնդիրը յարգուեցաւ:

Հաւատոյ գործերի մէջ ճշման հարցին վերաբերեալ իւր տեսութիւնները նա բացատրում է դոնատիստ Վինկէնտիոսին ուղղած գրութեան մէջ: Ինչպէս յայտնի է, վերջինիս կարծիքով եկեղեցու համար կայսեր գիմելն անբարոյականութիւն է, որ դրանով Քրիստոսի անունն է հայհոյւում: Օգոստինոսն ապացուցանում էր, որ եթէ կայ մէկը, որի վերայ լալ հարկաւոր է, այդ հէնց իրենք գոնատեաններն են, որոնք առաջինը կայսեր խառնեցին գործերի մէջ: «Ո՞վ մերոնցից կամ ձերոնցից, շարունակում էր Օգոստինոսը, պատժի երկիւղը չէ գովում, որը ծանրացած է հեթանոսների վերայ, մինչդեռ հեթանոսների պատիժները աւելի սարսափելի են քան դոնատեաններինը: Հեթանոսներին զոհաբերութեան համար մահուան պատիժ էր սպառնում, իսկ քրիստոնեաներին նրանց ազանդի համար — գոյքից զրկումն: Դուք մեզ նման գովում էք առաջին օրէնքը, որովհետև նա հեթանոսներին մօտեցնում է Քրիստոսին»: Ուրեմն, հեթանոսներին պատժելու կարծիքի նկատմամբ Վինկէնտիոսը համաձայն էր Օգոստինոսին: Օգոստինոսը յետ կանգնեց իւր նախկին հայեացքներից, իսկ նրա առաջուայ հայեացքները հեռեկաններն են. ոչ ոքի չպէտք է ստիպել Քրիստոսի հետ միանալու, այլ պէտք է խօսքով գործել, պէտք է յաղթել տրամաբանութեամբ և ոչ թէ պատիժներով: Իսկ Օգոստինոսը իւր այս հայեացքները թողեց առանց որ և է լուրջ ընդդիմաբանութեան, որ նա կարող էր լսել: «Նա անձնատուր եղայ փաստերին, ասում է նա: Նախա-

կոպտաներն ինձ օրինակներ բերեցին, ցոյց տուին ոչ թէ առանձին անհատներ, այլ ամբողջ քաղաքներ, որտեղ առաջ դոնատիզմն էր տիրապետում, իսկ այժմ ուղղափառութիւնն է թագաւորում: Այս տեսակէտից առանձնապէս յայտնի է իմ քաղաքը, որի բնակիչներն առաջ դոնատեաններ էին իսկ այժմ կայսեր ազդեցութեան տակ ուղղափառութիւն ընդունեցին և այնպիսի թշնամութեամբ են վերաբերում դոնատեաններին, որ մտածել անգամ չի կարելի, թէ նա երբ և իցէ դոնատեանների քաղաք է եղել»: Ուրեմն, Օգոստինոսը տեղի է տալիս վիճակազրական փաստերին: Շատ հետաքրքիր է հէնց ուղղափառութիւն ընդունող դոնատեաններին դրութեան վերլուծութիւնը: Օգոստինոսի կարծիքով դոնատեանները հաստատուն համոզմունքներ չունեն: Ուստի և կայսեր հրամանը շատ լաւ առիթ էր նրանց վերադառնալու համար: Բանն այն է, որ սմանք անկեղծօրէն չէին յարած դոնատեաններին, սակայն առանց որ և է արտաքին դրդիչ պատճառի ուղղափառութիւն ընդունել չէին ցանկանում, որպէսզի իրենց դարձովը չվերաւորեն լաւ բարեկամներին, և այս դոնատեաններն անա ուրախանում էին օրէնքի հրատարակուելովը: Ընդհակառակն, ուրիշներն ասում էին, թէ գործում էին չճանաչելով ճշմարտութիւնը և չկամենալով ճանաչել նրան. բայց հրատարակուած օրէնքի ազդեցութեամբ նրանք սկսեցին մտածել, ապա եթէ հրաժարուելով դոնատիզմի բարիքներից, նոյնը չստանան նրանք և ուղղափառութիւնից, այդ պատճառով սկսեցին հետախուզել թէ այս և թէ այն և եկան այն եզրակացութեան, որ ուղղափառութիւնը լաւ է դոնատիզմից: Մի երրորդ տեսակ մարդիկ էլ ասում էին, ինչ ձևով էլ ուզում ես դաւանիր քրիստոնէութիւնը, բոլորը մէկ է, որի պատճառով և օրէնքի հրատարակումից յետոյ առանց մի առանձին ընդդիմութեան ուղղափառ հաւատն էին ընդունում: Չորրորդ տեսակ մարդիկ սպիտութեան շնորհիւ իրենց հեռու էին պահում, և շնորհիւ տարածուած սուտ լուրերի, երկիւղ էին կրում մտնելու ընդհանրական քրիստոնէութեան մէջ, պիղծ համա-

բելով այն. բայց երբ օրէնքն ստիպեց, նրանք տեսան, որ այնտեղ պիղծ ոչինչ չկայ: Այդպիսով դոնատեանները վերաբերութեամբ հարկ եղաւ պատիժներ գործ դնել: Օգոստինոսին հակառակ Վինկէնտիոսը վկայութեան էր բերում եկեղեցու հայրերին. սակայն այդ վկայութիւնների վերայ հիմնուելն Օգոստինոսը կարևոր չէր գտնում, որովհետև դեռ հարց է, արդեօք եկեղեցու հայրերը վերջերը չփոխեցին իրենց կարծիքները: Նա բաւական է համարում ս. Գրքից բերուած հիմունքները. նա մասնանշում է «արա այս մտանել» (Ղուկ. ԺԴ. 23) խօսքերը, և Պօղոս առաքեալին, որ դարձի բերուեց ոչ թէ համեստ ներշնչմամբ, այլ կուրուութեամբ,—իսկ ո՞վ կարող է ասել, որ առաւել ծանր է գոյքից քան տեսողութիւնից զրկուելը:

Այդպիսով Օգոստինոսը իւր գրութեան մէջ պարզում է այն միտքը, որ կայսրները պարտական են Աստուծոյ երկիրըով գործել: Նրանց իշխանութիւնը Աստուածանից է: Այս դէպքում այդ օրէնքի հրատարակելը նշանակում է ծառայել Աստծուն, եթէ դա յօգուտ ճշմարտութեան գործելով, մարդկանց դէպի ճշմարտութիւն է դարձնում. իսկ եթէ դա հակառակ է ճշմարտութեան, այն ժամանակ դա հաւատացեալների համար փորձանք և թոյլերի համար վնասակար է դառնում: Օգոստինոսի անձնական հայեացքներն ընդհանրապէս այստեղ շատ ճիշտ կերպով են պարզուած, որովհետև ճշմարտութեան յաղթութիւնը սիրոյ մէջ է: Բայց և այնպէս նրա տեսութիւններն այնպէս են, որ ինկվիզիցիլայի համար պէտքական օրինակներ էին պարունակում: Այստեղ արտաքին չափ է դրւում, ուստի և խղճի ազատութեան հարցը յետին տեղն է անցնում: Հետևապէս, մենք եկեղեցական—քաղաքական այնպիսի հայեացքի ենք հանդիպում, որ չէ թոյլ տալիս այնպիսի բան, որը կարող է հեթանոսների համար ուղղափառների վերայ տարած յաղթանակ համարուել:

Այդպիսով աշխարհիկ իշխանութեան օգնութեամբ հերետիկոսներին հալածելը սովորական մի երևոյթ դարձաւ, և ոչ միայն գործնականութեան մէջ հաստատուն

հիմք բռնեց, այլ և պարզ գիտակցութեամբ տեսութիւն գարձաւ: Հետևապէս եկեղեցու գործերին պետութեան միջամտութեան դէմ եղած ամենածանրակշիռ փաստերից մէկն իւր ոյժը պէտք է կորցնէր:

Թէոդոս Փոհրի (408—450) թագաւորութիւնը հարուստ է եկեղեցական—պատմական մեծ դէպքերով, որոնք առաջ բերին մի շարք գրական յիշատակարաններ, որոնց մէջ բացատրուում են եկեղեցու և պետութեան միջև եղած յարաբերութեան տեսական սկզբունքները, նրանց փոխադարձ գործունէութեան ձևերը: Բոլորին յայտնի է Նեստորի ուժեղ խօսքը. «օգնիր ինձ, ս՛վ կայսր, հերետիկոսներին յաղթելու, և ես կ'օգնեմ քեզ պարսիկներին դէմ մղած կռուում»: Իսկ Կեղեստինոս պապի կարծիքով կայսեր համար առաւել կարևոր պէտք է լինի հաւատի քան պետութեան գործը. «Ձեր ողորմածութիւնը պէտք է աւելի եկեղեցու խաղաղութեամբ զբաղուած լինի քան պետութեան ապահովութեամբ»: Այսպէս էին նայում գործի վերայ եկեղեցու ներկայացուցիչները:

Շատ նշանաւոր է, որ ինքը Թէոդոս կայսրը եկեղեցու ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը պահպանում էր խիստ ամուր կերպով և կամենում էր խաղաղութեան վերականգնմանը զուտ եկեղեցական միջոցներով նպաստել: Եփեսոսի ժողովին ուղղած նրա հրովարտականներն եկեղեցու և սրա ազատութեան նկատմամբ ունեցած նրա բարձր հայեացքի գեղեցիկ յիշատակարան են ներկայացնում: «Ամենքին յայտնի է, թէ բարեպաշտութիւնը հրամաններով է աւելի հաստատութիւն գտնում թէ խորհրդակցութիւններով»: Կայսեր ներկայացուցչին պարտաւորեցրած էր հեռացնել ամէն բան, ինչ որ ժողովի հայրերին կարող էր արգելք լինել, որպէսզի յարուցուած դաւանաբանական խնդիրը պարզաբանուի ըստ կարելոյն խորապէս. իսկ իրեն ներկայացուցչին հրամայուած էր, որ նա բոլորովին չխնուուի տեղի ունեցող դաւանաբանական հետախուզութեանը, «որովհետև սուրբ եպիսկոպոսների թուին չպատկանող անձի համար անարգարացի է եկեղեցու գործերի մէջ

խառնուելը»: Բայց ամէն բան նրա դիտումներին հակառակ կատարուեց: Գիշերադաբար, Թէոդոս Մեծի վերջին շառաւիղը բնաւորութեամբ շատ թոյլ էր իւր ազնիւ տեսութիւններն անցկացնելու համար: Նա պալատականների ձեռքին անօգնական խաղալիք էր, իսկ սրանք այդ հարցի նկատմամբ այլ հայեացքներ ունէին: Գուցէ, Կոստանտինոսի ժամանակից սկսած երբէք պալատական ինարիզները, կաշառքներն եկեղեցական գործերի ընթացքի մէջ այնքան մեծ դեր չեն խաղացել, ինչպէս այդ ժամանակ, երբ մարդ, որը խորապէս հասկանում էր և եկեղեցու շահերը և եկեղեցու արժանիքը, գրում էր կայսեր. «Գու եկեղեցուն ծառայութիւն արած կլինես, եթէ ստիպես քո պալատականներին դադարել աստուածաբանութեամբ պարսպելուց»։ (Իսիդոր Պիլուսիօզ): Միևնոյն ժամանակ իրենք եկեղեցու ներկայացուցիչներն էլ բոլորեքեան եկեղեցու անկախութեան պաշտպան չէին: Ուղղափառների ներկայացուցիչները կայսեր վերայ ամենազօրեղ ճնշումն գործ դրին, որպէսզի նա դուրս գայ այդ չեզօք գրութիւնից: Նրա անձնական ջանքերը եկեղեցու խաղաղութիւնը վերականգնելու—յաջողութիւն չունեցան, սակայն նրա օրէնքները, որոնք ուղղած էին տապալուած Նեստորի դէմ, ողջունուեցին որպէս Եղիա մարգարէի ոգով Աստուծոյ նախանձախնդրութեան արտայայտութիւններ, Եղիա մարգարէի, որ ոչ միայն կեղծ մարգարէներին մեղադրում էր, այլ և կամենում էր պատժել և ոչնչացնել նրանց: Վերջապէս, երբ կայսեր անվատահոլութիւնը եպիսկոպոսական դասի վերաբերութեամբ այնքան մեծացաւ, որ նա 448 թուի Կ. Պօլսի տեղական ժողովում ուղղափառ դատողութիւններին հակելու համար աշխարհական պատրիկ ուղարկեց, ժողովն այս կարգադրութիւնն ընդունեց գոչելով՝ «Յերկար տարիներ թաղաւորին, մեր հովուապետին»։ — Ինչպէս յայտնի է, առաջին անգամ այստեղ ժողովն ընդունեց կայսեր այն բնաւորութիւնը, որ Կոստանտին Մեծը վերագրում էր իրեն: Այս շրջանում այդպիսի արտայայտութեան ձևը նոյն իսկ շատ գործածական դարձաւ:

Լևոն Մեծը ուրախութեամբ ընդունում էր ոչ միայն թագաւորական, այլ և քահանայական, նոյն իսկ առաքելական հոգին Թէոդոս Բ. և Լևոն Ա. կայսրների մէջ:

Թէոդոսի յաջորդ Մարկիանոսը և Լևոնը առաւել ևս խիստ էին պահպանում, քան թէ Թէոդոսը, սրա եկեղեցական քաղաքականութեան սկզբունքը — չմիջամտել եկեղեցու ներքին գործերին, և հաստատուն բնաւորութեամբ օժտուած լինելով, մեծ յաջողութեամբ գործադրում էին կեանքի մէջ: Չնայեա՞ծ, որ Մարկիանոսիւն (450—457) վիճակուեց եկեղեցու պատմութեան մէջ այնպիսի նշանաւոր դեր խաղալ, որ թերթելով նրա Լևոն Ա.-ի հետ ունեցած զրազրութիւնները, կարելի է կարծել, որ ոչ թէ Անատոլիոսը այլ Մարկիանոսն էր Կ. Պօլսի եպիսկոպոսը, այս կայսրը բացառապէս միայն գործում էր եկեղեցական միջոցներով: Հաւասարապէս և Լեւոն Ա. (457—474), երբ Քաղկեդոնի ժողովի հեղինակութեան մասին հարց բարձրացաւ, կարողացաւ խիստ օրինական ճանապարհով այդ հարցը վճռել, հեռու մնալով ամէն տեսակ ճնշումներից, չնայեա՞ծ որ Լևոն Ա. պապը իւր գաւանաբանական կամ կառավարչական նպատակներին հասնելու համար կայսերական իշխանութեան օգնութեան դիմելու չէր զժուարանում, — պարզապէս առաջարկում էր նրան սանձահարել սխալ մտածողներին և թոյլ չտալ ոչ մի կերպ որևէ գատողութիւն: որ կարող է վերաբերել այն խնդիրներին, որոնք վճռուած են Գ. Տիեզերական ժողովում:

Լևոն Ա.-ի յաջորդների ժամանակ գործերն այլ ընթացք ստացան: Բռնաւոր Վասիլիսկը [Բասիլիսկոս] (475—476) 475-ին հրատարակեց նշանաւոր *ἐγκύκλιον*-ը, որով նա փոխում էր Քաղկեդոնի ժողովի պարտադիր լինելը: Դաւանաբանական հարցերը կայսերական անմիջական իշխանութեամբ վճռելու առաջին փորձն էր այս: Քաղաքական փոխուած հանգամանքները ստիպեցին Վասիլիսկին շատ շուտով յետ վերցնել իւր շրջաբերականը: Ձէնոն (474—491) կայսրը 482 թուին հրատարակեց իւր հենտոիկոնը, որ պատճառ եղաւ արևելեան և արևմտեան եկեղեցիների

բաժանման: Այս շրջանում պապերը իրենց գրութիւնները մէջ
չէին քաշուում կայսեր մատնանշել կայսերական և եկեղե-
ցական իշխանութեան տարբերութեան վերայ, վերջինիս
առաջինի նկատմամբ ունեցած առաւելութեան վերայ.
կայսրներին յանդիմանում էին եկեղեցական գործերին
խառնուելու հակաօրինականութեան համար. հանդէս եկաւ
երկու սրերի տեսութիւնը: Գելասիոս (Գեղասիոս) պապը
493 թ. գրում էր Անաստասիոս կայսեր. «Առաւելապէս երկու
ոյժ, օգոստափառ կայսր, կառավարում են այս աշխարհը,
այդ թեմակաների սուրբ հեղինակաւորութիւնը և կայսերա-
կան իշխանութիւնն է, և զրանց մէջ քահանաների նշանակու-
թիւնը նրանով է նշանաւոր, որ նրանք հէնց կայսրները
համար էլ պէտք է Տիրոջը պատասխան տան Նրա դա-
տաստանի օրը: Դու գիտես, որ թէև քո աստիճանիդ հա-
մաձայն մարդկային ցեղի գլուխ ես կանգնած, բայց դու
էլ քո կամքը խօնարհեցնում ես Աստուածային գործերի
ներկայացուցիչներին առաջ, նրանց ես դիմում քո փրկու-
թեան գործում, նրանցից ես ստանում երկնային խոր-
հուրդները: Հետևապէս դու գիտես, որ հաւատոյ գործերը
մէջ դու պարտաւոր ես նրանց օրինական կարգադրու-
թիւններին հպատակելու, և ոչ թէ նրանց վերայ իշխելու,
— ոչ թէ նրանց պէտք է կամքիդ հնազանդեցնես, այլ
ինքդ պէտք է առաջնորդուես նրանց դատողութիւններով»: Ընդհակառակը, արևելեան եպիսկոպոսները բաւական թոյլ
ընդդիմութիւն ցոյց տալուց յետոյ մեծ մասամբ հնազան-
դում էին ձևականապէս պալատի բոլոր հրամաններին:

Սակայն պէտք է աւելացնել, որ ոչ բիւզանդական
բռնակալութիւնը և ոչ իրենց ինքնակալութեան սահման-
ները մինչև անսահման իշխանութիւնը տարածելու ձրգ-
տումն էր կայսրներին ստիպում այդպէս կոպտութամբ
եկեղեցու ներքին գործերին խառնուելու, — այլ կարելի է
ասել, տխուր անհրաժեշտութիւնը: Մօսօֆիզիտները վե-
ճերը ուղղափառների հետ այնպիսի չափեր ու ձևեր էին
ընդունում, որ լուրջ կերպով սպառնում էին հասարակա-
կան խաղաղութեանը: Նոյն իսկ իրենք կայսրները իրենց

